

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 5 բուրջ, կէս տարեկանը 3 բուրջ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արամյանների խնամովում:

Օտարաբարբառայինը գրվում են ուղղակի  
Тифлис. Редакция «Менк».

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն (եղվով)

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառից 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԳԱՅԻՆՈՒԻՆ

Դեռ գրել տվորեցէք:—Ներքին տեսու-  
թիւն: Ս. Աւետարանի թարգմանութիւնը: Ներ-  
քին լուրեր: Արտաքին տեսութիւն: Սեր-  
բիա: Նամակ և Պոլսից: Նամակ Գերմանիայից:  
Նամակ Պարսկաստանից:—Սուրբ լուրեր:—  
Յայտարարութիւններ:—Բանասիրական: Նա-  
մակ փարբից:

## ԳՆՈ ԳՐԵՆ ԱՌՎՈՐԵՑԻՔ

Ճշմարիտ որ վարմանայի է:—Մենք տեսել  
ենք աշխարհներ, ման ենք եկել զանազան  
քաղաքներ, անցել ենք Եւրոպա, մնացել ենք  
այդտեղ, ուսումնասիրել ենք, լսել տեսել ենք,  
որ ամեն տեղ, ուր գրականութիւն կայ (լե-  
ներ այս լրագրական կամ բարձր), կայ և  
մի գրականական ձև: Յօդուածներ, նամակներ,  
գրքեր, հեղինակութիւններ գրելու, շարադրե-  
լու համար ձևեր կան:

Որ կուսակցութեան կուզէ պատկանում  
լինէր լրագիրը կամ ամսագիրը, որ գիտու-  
թիւնն էլ կուզէ քարոզում, պաշտպանում  
լինէր, որ աստիճան զարգացած մարդու գրած  
էլ լինէր՝ այնու ամենայնիւ դա պարզ է ու  
բայցայայտ: Կա յայտնի, աշխարհայ կերպով,  
հասկանալի, ընդհանրութեան մտածելի լեզ-  
ւով իր գաղափարները, մտքերը համեմատ  
լողկայով (արամարանութեամբ) ասում, խօ-  
սում է ընթերցողների հետ և իր յօդուածի  
մէջ յարուցած հարցը յօգուտ իրան պաշա-  
պանում:

Եւրոպայում հրատարակվող անասնաբանական,  
պատկան, և կրեական լրագիրները և  
եղբայրութիւն ու վատիկանի բռնակալու-  
թիւն քարոզող օրգանները մի կողմից իսկ  
ազատամիտ, առաջադէմ, մարդու ազատու-  
թիւններ, արժանաւորութիւններ յայտնող,

զարթեցնող թերթերը և բարձր գիտութիւն,  
փիլիսոփայութիւն տվորեցնող, պատմող ամ-  
սագիրներն ու շարժաթերթերը միւս կող-  
մից՝ ասում են, ինչ որ անելու են, գրում են  
ինչ որ գրելու են յայտնի, որոշ կերպով:

Առաջինները իրանց գրուածներում, յօ-  
դուածներում փառաբանում են ամեն տե-  
սակ բռնակալութիւն՝ կրօնական կամ քաղա-  
քական, եկեղեցական կամ աշխարհական.  
Երկրորդները կրեականութիւն, անօգուտ,  
փնասակար գիտութիւն, չոր ու ցամաք սքո-  
լաստիկ փիլիսոփայութիւն:

Երկրորդները նոցա հակառակ աշխատում  
են ցոյց տալ ամեն տեսակ ազատութիւն  
կրօնական և քաղաքական. յետոյ ժողովրդի,  
ազգի, անհատի իրաւունքների գերազանցու-  
թիւնը, մարդու, օգտակար, առաջադէմ գի-  
տութիւնը:

Մի քանիները հասկանալի, բարձր կեր-  
պով ասում են՝ մենք անսխալական ենք,  
ամբողջ աշխարհի տէր ենք, բռնակալ ենք,  
ամենքդ մեր ստրուկներ էք:

Միւսները պատասխանում են՝ սուտ էք  
ասում, դուք սխալական էք, ամբողջ աշ-  
խարհը ընդհանրութեան սեպակալութիւն  
է, ստրուկների դարը անցաւ, մենք ձեր դէմ  
ենք:

Եւ սոքա՝ այսինքն այս հակառակ կու-  
սակցութիւնները, իւրաքանչիւր իր խօսքերը,  
իր մտքերը ճշմարտացիութեամբ ասած է  
բերում փաստեր, հաստատում է, խօսում է,  
գրում է հասկանալի ձևով, պահպանում է  
լողկաւ: Այդ դովելը յատկութիւնը, եթէ  
ընթերցողը կուզէ թող ասէ պարզութիւնը,  
ունէ իւրաքանչիւր լրագիր, լինէր սա ծայ-  
րայեղ արմատական, ասակապետական, կամ  
ճայրայեղ սև կրեական, կաթողիկեզուխա-  
կան Ամբողջ Եւրոպայի մասնուր, գրականու-  
թիւնը, որ լեզուով կուզէ լինէր, հասկանալի է,  
մտածելի է ընթերցողներին: Հակառակ դէպ-

քում ոչինչ կը լինէր դա, լինելու, սպրկու-  
իրաւունք չէր ունենալ դա, եթէ չը հաս-  
կացելը և չը հասկացներ:

Արեւմտեան կրեական, յետադէմ լրագիր, ամ-  
սագիր կամ շարժաթերթ լինելու համար  
չը պէտք է անպատճառ անհասկանալի, ան-  
մտածելի, բարձր (sic) լեզուով, ոգրմբեր, դա-  
տարի, նշանակութիւն չունեցող բառեր շա-  
րեղով գրել յօդուածը: Չը պէտք է գործ  
գնել այնպիսի բառեր, խօսքեր, տերմիններ,  
որոնց նշանակութիւնը, ինչ տեղ ինչ ա-  
ռիթմում և ինչպէս գործածելը չը գիտէ  
գրողը:

Ինչ է նշանակում օրինակ այդպիսի բան՝  
հասկանալի անկրօնութիւն, յետոյ  
ազգաւ եսականութիւն: «Արարատ»  
ամսագիրը լինէ է այդպիսի սքոլաստիկ դար-  
ձուածներով և նախադասութիւններով: Մենք  
համոզված ենք, որ իրանց յօդուածագիր-  
ները չեն հասկանում իրանց գրածը, ուր  
մնայ խմբագրութիւնը: Լսել են բառեր՝ ան-  
կրօնութիւն, եսականութիւն, ազգութիւն  
և այլն, բայց դոցա նշանակութիւնը, Աս-  
տուած ասյ... և այլնով այդ պարոնների  
հայկաբանական արամեոլոգիաներ, ինչտեղ  
կուզին այնտեղ էլ գործ կը գնեն, ո՞վ է  
հարցնում:

«Արարատ», որպէս արեւդայական ամ-  
սագիր, իրաւունք ունի ի հարկէ զանազան  
դասեր տալ «Մշակին», մանաւանդ աստուա-  
ծաբանութեանց ու հայկաբանութեանց, իսկ  
ինքը առաջին գործն է համարել պաշտպան  
այդ գիտութիւնները, անհասկանալի, կասա-  
րեղ խօսք դարձնել: Իսկ մենք մեր կողմից  
խորհուրդ կը տանք «Արարատի» խմբագրու-  
թեան և իր աշխատակիցներին՝ գրականական  
ասպարէզ երևալուց առաջ դեռ գրել սո-  
վորել...

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ՆԱՄԱԿ ՓԱՐԻՋԻՑ

Մեր յայտնի բանասէրները մէկը՝ կամենալով  
միշտ խօսել ու անել վատ լուրերը իրանից հե-  
ռացնել, ձայն է տալիս և ասում՝  
...Թող լռէ մունձը, անդամաւորը,  
«կամ՝ որոք քաղցր է թշնամու լուծը...»

Այո, թող նորա լռեն, այո, թող նորա չը խօ-  
սեն, բայց...

...Բայց մենք, որ ունենք հողի ու սիրտ...

Միշտ պիտի խօսենք, միշտ պիտի անենք, պիտի  
հասկանանք և անդադար էլ հասկացնենք՝ ինչ որ  
հարկաւոր է, ինչ որ արժանի ու աղին է:

Եթէ երկու տարի շարունակ \*) հանդամանքնե-  
րին նայելով տեղեկութիւններ տուցի ձեզ պրօ-  
ֆէսոր պ. Եղուարդ Գիւրջիի դասախօսութիւն-  
ների մասին, կարծում էք այս երբորդ տարին կը  
լռեն... ոչ ես չեմ լռել... դուք ինչ ուզենք կար-  
ծեցէք՝ այդ ձեռ կամքն է. ես ուզում եմ խօսել  
այս էլ իմ կամքն է:

Հայազգա-պրօֆէսորի 75—76 դարեցական տա-  
րուայ դասախօսութիւնները, անցեալ տարուայ

պէս, կարելի է բաժանել երեքի՝—հայոց հին, սկզբ-  
նական պատմութիւն, համեմատական թարգմա-  
նութեան շարժաթերթիւն և աշխարհաբար լեզու-  
թուանք կարգով:

### Հայաստանի ժողովրդի սուրբ ու անկողպտելի

աւանդութիւնները և սոցա հետ ժողովրդաբեր հայ  
պատմագիտներից շատերը կամենում են, որ հայոց  
աշխարհի սկզբնական կենցաղավարութիւնը սկը-  
սուէր անպատճառ Հայի նահապետ առասպելա-  
կան դիւցազնից: Այս այն առասպելա-դիւցազն է,  
որ իր նման յաղթանաղամ, առասպելական Բէլին  
սպանելուց և ոչնչացնելուց յետոյ՝ որպէս թէ  
կարգադրութիւններ է անում և իր բնակած երկ-  
րին ու հպատակ ժողովրդին իր անուշով կոչում  
է—Հայք: Եւ այնուհետեւ որպէս թէ սկսվում է  
առաջին կենցաղավարութիւնը մեզ յայտնի Հա-  
յաստան աշխարհում ու հետեւաբար այնտեղ բնակ-  
ւող ժողովրդի:

Մենք այսպիսի բան ի հարկէ չենք ընդունիլ,  
ասում է պ. Գիւրջիէն, որովհետեւ բացի այն, որ  
այս առակը պատմական ճշդութիւններ չէ պարու-  
նակում իր մէջ՝ հակառակում է նոյնպէս լեզուա-  
բանական օրէնքներին կամ տեսութիւններին:  
Այնպէս որ յայտնի է, թէ մի հասարակ բառ չէ  
բղկում մի բարդ կամ բազմաբար բառից, այլ  
ընդհակառակ՝ բարդը ծնվում է հասարակից: Այս-  
պէս և հայ հասարակ, արմատական բառը չէր  
կարող դուրս գալ, ծնուել հայկ բազմաբարից,  
այլ օրէնքների համեմատ ճայիչ պիտի բղկէր  
ճայիչից և այն և այն:

Սակայն չը կանգնելով պարզ, արմատական, բա-  
ղադրեալ բառերի նշանակութեան, ծագման և սոցա  
նման լեզուաբանական ուրիշ մանրամասնութիւն-

ների վրա, որ աւելի մասնագիտական հարց էր են,  
զանք ժողովրդի թանկագին աւանդութեանը, որ  
ինչքան կուզէ մուծել և առասպելական լինի, այ-  
նու ամենայնիւ պատմութեան համար արժէք ունի:  
Եթէ պատմական ճշմարտութիւնը հետո աչքով նայէ  
համեմատ աւանդութիւններին, անկարելի է որ  
չը նշմարէ դոցա մէջ, եթէ ոչ մի անհավանականի,  
ամբողջ ճշմարտութիւն՝ զոնէ հաւանական պատ-  
մութեան հեռաբեր, որ նայելով մի ժողովրդի վառ  
երեակալութիւնը՝ փոփոխելով և յեղաշրջելով իր  
համար մի վերջին, անհակառակելի սքոլութիւն է  
հարձուում Այստեղից բնականաբար այդպիսի սքը-  
րութիւնները մտնում և տեղ են գտնում նոյն ժո-  
ղովրդի պատմութեան թերթիւրում, որ գրել են այդ  
ազգի կենքով ապրող հեղինակների ձեռքերը:

Պատմաբանական ու փիլոզօֆիական գիտութիւն-  
ները ընդունում են, որ սկզբնական, անլրատակ  
ժամանակներում արիական մեծ ու նշանաւոր ցեղը  
միջին Ասիայից գաղթելով զանազան կողմեր՝ տա-  
րածուել էր նոյնպէս Եւրասիայի աշխարհի երեւի  
վրա՝ հասցնելով իր բնակութիւնը մինչև Հայաս-  
տանի բարձրավանդակները: Անս, ասում է պրօ-  
ֆէսորը, այս պէտք է համարել հայոց աշխարհի  
առաջին, հին բնակութեան, եթէ կարելի է այսպէս  
խօսել, հիմքը, թէ է, այո, անլրատակ ու խորին  
ժամանակներից: Բայց այս բառական չէ: Սկզբնա-  
կան գաղթականութիւնները հետզհետէ պիտի շա-  
րճանակուում լինէին և վտարում Հայաստան կրկին  
վրա, հեռաւոր ու մտախառն աշխարհներից: Մովսէս  
Խորենացու պատմութեան մասնաւոր առաջին  
գլխերում անհակառակութիւններ կան այս մասին,  
որոնց եթէ լաւ գիտենք՝ ասես մի կողմից կը հաս-  
տատեն մեր ասածը: Իսկ ինչ որ վերաբերում է  
Բարեկաստանից, Հրէաստանից և մինչև անգամ  
Չինաստանից՝ դէպի Հայաստան գաղթողներին՝

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Ս. ԱՆԵՏԱՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. Եջմիածնի լեզու ու թարգմանի «Արա-  
րատը» երկու տիպ օրանից առաջ մեզ լուր  
տուեալ թէ «Վեհ. Հայրապետը վարդապետ  
նորիւթիւնը բաժնէ է Ս. Աթոռոյս տպարա-  
նին մէջ տպագրել ըստ վարեմի տվորու-  
թեան ազգին (») Ս. Աւետարանին գրաբառն  
ու աշխարհաբար ի միասին, զգու-  
շաւոր և հարգազատ թարգմանու-  
թեամբ: Մեզ, և կարծեմ ըստ ուսում  
նական աշխարհին, խիստ հետաքրքրի էր  
իմանալ, թէ արդեօք ո՞վ են այն գիտնական  
անձինքը, որոնք Մերոպայ, Սահակայ և  
միւս թարգմանչաց ամբողջ մերայ այսօր  
բազմում են. արդեօք հարաւոր է այդ ինչ  
և աստաներող դարու արդեօք անուանըր և  
գէթ մոցա յաճախած Աշքբանայիսն, Ա-  
թէնքը և Բիւզանդիոնը իմանալ... Յետոյ շատ  
կը բաղձայիք իմանալ թէ Ս. Եջմիածնի  
մեզ արդեօք ինչ ապահովութիւն է տալի  
թէ նորա գիտնականաց պատրաստած թարգ-  
մանութիւնը «գրուածը և հարգազատ» է  
լինելու:

Մեզ երևում է թէ այս երկու հարցմանց  
պատասխանը միւր միւսից դժուար է: Այս-  
տեղ առաջին թողելով, միայն երկրորդի  
վերայ կը լինի խօսքը: Եթէ զարբարը մեզ  
համար բանը չը պարզեր, մենք հա-  
յիրս շուտով կը տեսնէինք դժուարութեան  
հուշիւնը, որ ասի սա է: Մի թարգմանու-  
թիւն որպէս զի գրուածը լինի և հարա-  
զատ, հարկաւոր է նախ և առաջ ունենալ  
թարգմանելի բանին բունն ու իսկականը և  
ոչ թէ նորա որ և է կասկածելի պատճէնը:  
Այժմ հարցը դա է թէ մեր արդի թարգմա-  
նիչ սքբանցի Հայրերը, որ Եջմիածնի նստել  
են, ունեն իրանց առաջին բուն իսկական  
աւետարանը թէ նորա մի որ և է անարժան  
օրինակը: Այս հարցումս կարելի է ուննց  
հայոց ակնածին խորթ թուի և ասին միթէ  
մեր աւետարանները ճշմարիտ և իսկական  
չեն: Սորան պէտք է առաջ այն ասել թէ  
մեր արդեօք հոգեբանական և մասնաւորա-  
պէս Ս. Եջմիածնի շնորհից այդ մասին խոր  
խաւարի մէջ ենք, իսկ երկրորդ պէտք է

այդ արդէն հայոց պատմութեան թերթիւրում ևս  
կը գտնենք: Այս բայր մեր յիշած ժողովուրդները  
(ամբողջները) հաւաքուելով միասին, անուշա պիտի  
կազմէին առաջին հասարակական գրութիւնը (etat  
sociale) հայոց աշխարհում և այսպիսով պիտի  
զոյացնէին իրանից մի կենդանի մարմին, որ հե-  
տեւաբար թէ ծնունդով և թէ դարձեալ եկող-զաւ-  
թականներով անկող ու բաղձանալով առիթ է տա-  
լիս ստեղծուելու մի ամբողջ քաղաքական-հա-  
սարակական կենսաբան՝—հայոց ազգայնութիւնը:

Եւ եթէ մինչև անգամ հաւատանք և ասենք  
հայկական աւանդութեան հետ միասին, թէ Հայկ  
նահապետը իր մարդկանցով գալիս է Բարեկաս-  
տանից Հայաստան և այդտեղ հաստատում իր  
բնակութիւնը ու մի ազգ ստեղծում, ոչ թէ մեր  
վերջիվառ, գիտնական մեթոդների վրա հիմնած  
ենթադրութիւնները թէ հայ սկզբնական ժողովրդի  
կազմուելու և թէ դաղթականութիւնների մասին,  
ողիղ չեն լինի, այլ և թող ներուի մեզ ասել,  
աւելի ևս կը հաստատուին: Բայց և հայոց պատ-  
մութիւնը, երբ կամենում է անպատճառ մի Հայկ  
ունենալ, այս առիթում վտար ինչ վաւերականու-  
թեան թե կը ստանայ: Արովհետեւ այդտեղ առ-  
վում է և այն, թէ Հայկը դալով Հայաստան գտաւ  
ժողովուրդ, որ կամբով հնազանդուեցաւ: Այս  
ժողովուրդն էր արեւմտ հայոց աշխարհի, իր բնա-  
կած երկրի առաջին, հին տէրը, որ ընդհանուր է  
Հայկին կամ դորա նման մի ուրիշ ու և իցե  
յաղթանաղամ՝ աշխարհակալին, որ կարող էր դուրս  
գալ, երևալ անթիւ գաղթականների միջից:

Սակայն մարդկային երևակայութիւնը մեծ գիւրէ  
խաղում կենսաբան մէջ և շատ անգամ այնպէս ու-  
ժով է լինում, որ մի վերջնական բան, հակա-  
ցողութիւն կամ երեղթ համարեն դարձում է  
իրական: Այսպէս և մի որ և է ժողովրդի հա-

\*) Տես Մշակու № 23, (74.) և № 25, 26, (75  
տարուայ)



սէյն-Ալէքի փառային բնակարանում հասարակում են մեծ եղբայրս Միհայր-Ռիշայի փառան, չէլս-ուր-խոյալ Հասան-Սալարուլան և Ֆէյհոյին, Միհայր-Փառան և Օտանս Գրիգոր Էֆէնդին, — և այդ հինգ պաշտօնականները գիշեր ժամանակ միասին դիմում են սուլթան Աբդուլ-Ազիզի պալատը, վերցնում են իրանց հետ պահպանները, ուղարկում են զորքեր թէ ծովով, թէ ցամաքով պալատը պաշարելու համար, մտնում են սուլթանի պալատի ննջարանը, զարթեցնում են նրան, և նորան իր կնոջ մօր և զավակների հետ տանում էն նաւակով Թորքաբուրի պալատը ու այնտեղ բանտարկում: Հետեւեալ առաւօտը թնդանովի ձայնը հրատարակում է Մուրադ Կ-ին Թիւրքիայի կայսր:

Նորընտիր սուլթանի առաջին գործը այն է լինում որ նա ներդրութիւն է յայտնում բոլոր քաղաքական յանցատուներին՝ բանդերի դռները բացփում են, հին աքաղաղած ուսումնական տասնիկները թողուցնում են ստանում յետ դառնալ իրանց աքսորանքից:

Կ. Պոլսի մէջ այդ ներքին յանկարծակիս յեղափոխութիւնը երեք օր շարունակ տոնակցաւ ժողովրդի կողմից՝ ուրախ երգեր և դիմաւորական նուագաբանները հնչեցնում են մայրաքաղաքին փողոցները: Բոլոր խանութները դիւրերով բաց են մնում, երեք փշեր շարունակ քաղաքում լուսավառութիւն և հրախաղութիւն է լինում: Ժողովուրդը սպասում է ազատութիւն նոր սուլթանից, նորա հրատարակած հրովարտական համեմատ սպասում է թէ բոլոր հպատակներին առանց ազդուութեան և դատարանի խորհրդի հաւասար իրաւունքները կը տրվեն: Սպասում են որ պետական նիւթական գործիւնը, պետական դանձը կը բարեկարգվի: Արեւոք ժողովրդի այդ բոլոր յայտերը կը կատարվեն... Սուլթան Մուրադի խոստացած նոր սահմանադրութիւնը ատում են մշակվում է այժմ: Ատում են որ Թիւրքիայի սահմանադրութիւնը անգլիական և ամերիկացի դրոշմներով լինի: Սահմանադրութեան մշակողները թուով բազմում են: Սաղաղակով, չէլս-ուր խալիֆին և Միհայր-Փառան: Լուսում է որ Թիւրքիայի պետական կազմակերպութեան այդ վերանորոգիչները թուով արդէն կարծիքները տարբերութիւններ են յայտնում: Մի քանիսն արդարեւ ընդարձակ պարտութիւններ և կատարեալ ազատութիւն են կամենում շնորհել, միւսները սնդուրով են թէ դեռ ևս վաղ է առ այժմ և երբայական երկիրներին նման ազատութիւնը, այդ պատարաստը հարկաւոր է ազգը փոքր առ փոքր սահմանադրական իրաւունքները վայելելուն...

Մայիսի 21-ին առաջին անգամ նոր սուլթանի մզկիթ երթալու փառաւոր հանդէսը կատարվեցաւ: Փողոցները ամբողջով լին էին և ամեն կողմից ուրախութեան ոգևորված ազալակներ էին բազում: Կ. Պոլսի առաջ զանգնած բոլոր եւրօպական նա-

ւերը, բայց երեք հիւսիսային պետութիւնների նաւերից, դրօշակներով զարդարված էին: Ա. Պոլսի մէջ գտնված յունաց պատգամաւորութիւնը ներկայացաւ Սուլթանին շնորհատուութեան ուղերձով: Հայոց-ազգային-ժողովը էլ որչափ շնորհատուութեան ուղերձ մատուցանել Մուրադ-սուլթանին: Սուլթանը 36 տարեկան է և ստում են քիչ թէ շատ եւրօպակիքի մանչ է և եւրօպական ըզրոներին տեղեակ:

\*\*\*

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆՆԱՅՑ

Ստրասբուրգ, 26-ին մայիսի 76.

Էլզասի ամենանշանաւոր քաղաքներից մինն է իր արդիւնաբերութեամբ Միւլհաուզէն քաղաքը: Բուրգեայ կերպանների պատրաստութիւնը սկսվում է Մուլհաուզէնի մէջ արդէն 16-րդ դարու վերջերումը, իսկ բամբակի կերպանների գործարանները հիմնվում են միայն 1746 թվին, երեք քաղաքացիներից: Այս երկու հիւղերը արդիւնաբերութեան պատճառ են դառնում, որ Միւլհաուզէն հեղհեղ հարստանում է և դառնում է ամբողջ Էլզասի մէջ ամենահարուստ արուեստագործութեան: Աւելի յաջող մրցութիւն անելու համար այլ քաղաքներում և մասնաւոր Ֆրանսիայում հիմնվող գործարանների և նրանց արդիւնքների հետ, Միւլհաուզէն սկսում է հիմնել իր մօտ գանազան արուեստագործական ուսումնարաններ, որոնց թըրում մասնաւոր նշանաւոր է դառնում քիմիական ուսումնարանը (Ecole de Chimie): Էլզասի միւս քաղաքներում էլ, ինչպէս Մարկիրխ (Markirch, կամ Sainte Marie aux Mines) ընդարձակվում է այս արդիւնաբերութիւնը բամբակի և բուրգի կերպանները: Մարկիրխ քաղաքը օրինակ իր ամբողջ ույծերը դարան է դարձնում այն ժամանակից, երբ նորա չորս հազարը աղքատներում են և աւելի փոքր արդիւնք են տալիս:

Գործարանների բազմանալը և գիտութեան առաջադիմութիւնը, մասնաւոր ջիւղիայի աւելի և աւելի մեծ նշանակութիւն ստանալը գործարանական արդիւնաբերութեան մէջ, առիթ են տալիս Միւլհաուզէնի բնակիչներին մի արուեստագործական ընկերութիւն կազմելու: Sociéte industrielle de Mulhouse—որը ամսիս 11-ին սօնից իր 50 ամեայ տարեդարձի տօնը: Այս սօնի առիթով մէկ հանդէս (exposition) բացվեցաւ և որքան տեղեկացաւ, բացում, որին ներկայ էին միայն ընկերութեան անդամները, չափազանց շքեղ և փառաւոր էր: Ընկերութեան անդամ չեղածները միայն 14-ին մայիսի իրաւունք ստացան հանդէսը մշտնելու և գեղեցիկ ճաշակով դուրս դրված իրերը նայելու:

Ամբողջ Էլզասի երկաթուղիների վարչութիւնները կէս գնով բաժանում էին տոմսակներ, այն-

պէս որ միայն գնալու ծախքը վճարելով կարելի էր նոյն տոմսակով և վերադառնալ և այն էլ իրաւունք ստանալով երեք օր անցնելու Միւլհաուզէնի մէջ:

Հանդէսում դրած առարկաները ոչ միայն Միւլհաուզէնի մէջ գործված են, այլ և ուրիշ քաղաքների գործանոցներում, որոնք պատկանում են Sociéte Industrielle անդամներին: Գլխաւոր առարկաներն էին բամբակի և բուրգի կերպաններ, մեքենաները, որոնց վերա նրանք գործվում են և դոյն զգոյն ներկվում են: Ամեն մարդ, որ աւելի մօտիկ ծանօթ չէ արդիւնաբերութեան այս ճիւղի հետ, հաղիւ կարող է իրան երևակայել, որ մասնաւոր բամբակը մի այնպիսի նիւթ է, որից կարելի լինէր այնքան բարակ, շքեղ և այնքան գեղեցիկ գոյներ ունեցող կերպաններ չլինելու: Ի հարկէ թոյլ տված չէր չոչափել դուրս դրած առարկաները, բայց ամեն մի նայողը հաղիւ հաւատում էր իր աչքերին, որ այդ աչիւ և բարակ նիւթածները, որոնց թուով գտնվում էին և á jour գործվածներ, մեղաբոյց չէին, այլ բամբակից են պատրաստված: Այդ կերպանների թուով կը տեսնէիք թաւի (մախմուր), շաբրի (shawl) պէս հիւսվածներ, գորբիկներ (gobelins) նմանութիւններ, և այս բոլորը—բամբակից: Զարմանալի կատարելագործութիւն: Այս առարկաները տեսնելով հարկաւոր չէ մինչև անգամ գեղեցիկ սեւին պատկանելու, նրանց գեղեցիկութիւնը վայելելու և հասկանալու համար:

Հասկանալի է, որ սիլքից արդէն այս գործարաններից գուրս եկող կերպանները մասնաւոր Ֆրանսիայում առանձին յաջող ընդունելութիւն ստացան և առաջին գործարանի հաստատման քառասուն տարուց յետոյ, 1785 թվին, գործարանների թիւը աճեց մինչև քսան: Հասկանալի է նմանապէս, որ այս արդիւնաբերութիւնն էր գլխաւոր պատճառը, որ Ֆրանսիան այն ժամանակ աշխատում էր իր ձեռքը գցել Միւլհաուզէն քաղաքը իր հարստութիւններով, իր ընդունակ և գործունեայ ժողովրդով: Այն ժամանակ Միւլհաուզէն անկախ, ազատ մի քաղաք էր, որ պատկանում էր Չլիցիբիայի դաշնակցութեանը և միայն 1798 թվին դառնում է Ֆրանսիական հանրապետութեան սեփականութիւն:

Այդ արդիւնաբերութիւնը, որ Միւլհաուզէն քաղաքը երևելի դարձրեց, այնքան բարձր է, որ նորա հետ բոլորովին կարող չեն մրցել ոչ Ֆրանսիան և աւելի պակաս Գերմանիան, ուր նիւթածները արդիւնաբերութիւնը դեռ (համեմատաբար ի հարկէ) շատ ստոր գրութեան մէջ է գտնվում: Մրցութիւն անելու անկարելութիւնը պատճառ եղաւ, որ գերմանական արուեստագործներից և գործարանատէրերից շատերը կառավարութեանը խնդրեց ներկայացրին պատերազմից յետոյ չը միտարել Միւլհաուզէն քաղաքը գերմանական կայսրութեան հետ, այլ վերադարձնել Ֆրանսիային: Նրանք այն

բանից էին վախենում, որ Միւլհաուզէն գերմանական քաղաք դառնալով, այնուհետև առանց մրտնոջական մարտի իրաւունք կունենայ ծախել Գերմանիայում իր կերպանները և ուրիշն բոլորովին կը սնչեցնէր գերմանական արդիւնաբերութիւնը: Այսպէս էլ եղաւ: Բայց Գերմանիայի արդիւնաբերութիւնը մեծակ չէր որ ընկաւ: Միւլհաուզէնին էլ շատ նուազվեցաւ, որովհետև իր արանքը Ֆրանսիա մտցնելով նա մարտի ենթարկվեցաւ, իսկ նորա գլխաւոր աւանդները էլ Ֆրանսիայում էին և ոչ Գերմանիայում: Որքան ուրիշն նրանաւոր էր Միւլհաուզէն իր ծաղկած գրութեան ժամանակ, եթէ նրա արդիւնաբերութիւնը այժմ նուազվելով էլ շատ զգալի կերպով, այնու ամենայնիւ սպանեց Գերմանիայի բոլոր նման արդիւնաբերութիւնը:

Միւլհաուզէնը և այն կողմից նշանաւոր է, որ խնցիլ է բարուրել աշխատաւոր դասի գրութիւնը, հիմնելով cité ouvrière, որ քաղաքի մի մասն է կազմում և մշակների համար բնակարաններից է բաղկացած, ուր աշխատողները աւելի արժան, մաքուր և յարմար են ապրում, քան թէ ուր և կցէ մշակները:

Գորա մասին գուցէ մի այլ նամակագրող, որ աւելի մօտ ծանօթ է cité ouvrière հիմնարկութեան հետ, աւելի մանրամասն և հետաքրքիր տեղեկութիւններ կը հաղորդի ձեր ընթերցողներին:

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ՊՈՐՄԱՆՆԱՅՑ

Ռաշտ, մայիսի 20.

Այս օրերումս մի գզվելի անցք պատահեցաւ այստեղ, որ ամենքին վախեցրեց: Այդ անցքը արտապատութիւն էր մասնաւորապէս կատարի մտլուստիւթեան զարթնելուն: Մի երիտասարդ հայ, Առաքել անունով, դիմելով առ և այստեղ և նրա ծառան թուրք է: Մայիսի 12-ին մի թուրք կին մտնում է Առաքելի խանութը, խմիչք ստնելու համար: Հարեան մասնաւորապէս տեսնելով որ մի մասնաւոր կին խմիչք է ստնում, այն էլ ջրիտոմնայի մօտ, սկսում են սաստիկ վրդովել և նախատել թէ հային, թէ թուրք կնոջը: Մահմաական ամբօրի մէջ մղուստիւթեան զգացմունքը զարթնեցնելու համար շատ անգամ ամենանշանաւոր պատճառ բուսակներ է: Ամբողջ հաւաքվում է վրդովում է, կատարում է, թափվում է խանութի մէջ բռնում է թէ մասնաւոր կնոջը, թէ հայ երիտասարդին և կամենում է ամեն իրանց մօլլայի մօտ: Բայց ինչպէս որ լինի հային աջողում է այս անգամ փախչել... Հետեւեալ օրը ամբողջ չէ հանգստանում, որտեղ է հային ամբողջ քաղաքում: Հայերը փախում են իրանց խաւութիւնը: Վերջապէս դառնում են ողորմելի Առաքելին, որ յայտնվում է մի համարակից պարսկապատակ հայ, և սաստիկ ձեռնով տանում են կը դառնան: Սորան հետեւում է Գեղեցիկանուս կայսրի ձեռքից փախած ու Տրդատ հայոց թագաւոր հաւանած գեղեցիկ, սուրբ Հովհաննէս և Գալանի կոյսերի և սոցա ընկերակիցների նահատակութիւնը, որ պրօֆեսորի խօսքերով մի լեզնիկ է: Այստեղ պէտք է կցել և Հայաստանի առաջալի ազատութիւնը: Երկրորդ մասը պարսկապատակ է սուրբ Գրիգորի վարդապետութիւնը և քարոզները: Վերջապէս երրորդի մէջ պատմվում է Հայաստանի քրիստոնէութեան ընդունելութիւնը և նոր հաւատի տարածելը Լուսաւորչի ձեռքով: Տրդատի և սուրբ Գրիգորի ճանապարհորդութիւնը դէպի Հոմա՝ մեծ Կոստանդիանուս կայսրին ու Ս. Միլլիտար պապին այցելութիւն անելու համար... Անկարելի է մի քանի խօսքերում բովանդակել Ազաթագրոսի ամբողջ պատմութիւնը, (226—330 տարին շարունակ) որ բաւական հետաքրքիր և ուշադրութեան արժանի տեղեկութիւններ է պարունակում իր մէջ չորրորդ դարու Հայաստանի ժողովրդի կեանքի մասին առհասարակ, մասնաւոր աչքի առնել ունենալով նոր, բարձր հաւատի տարածման պատմութիւնը, որով մենք կարող ենք զարգաւոր ունենալ հայ ազգի այն ժամանակուայ մտաւոր ու բարոյական զարգացման մասին: Չը պէտք է մտանալ որ այդ գրքում մենք պատահում ենք նոյնպէս ժողովրդական սովորութիւններին, աւանդութիւններին, ժամանակակից քաղաքական, կրօնական և ընդհանրապէս մեր երկրի կենցաղավարութեան դասադաս կողմերին, որոնց մինչև հիմայ մեր հին գրականութեամբ պարպող բանասէրները հարկաւոր ուշադրութիւնը չեն նուիրել...

(Կը շարունակվի)

Իսկ ինչ կը վերաբերի Ազաթագրոսի ստա՛խօսքերին Տրդատի մասին, մեզ անհաւատարի է թըվում, որ մի թաղաւոր թոյլ տար իր բարոտուղորին այնպէս փոտ խօսել ինչպէս որ անում է մեր հեղինակը, մասնաւոր եթէ մտաբերենք, որ այդ պատմութիւնն էլ Տրդատ թագաւորի հրամանով էր գրած: Բայց և դրա գործ դրած լեզուն թէ և կրում է իր ժամանակի դժբեր, այնու ամենայնիւ ազատ չէ մնացել հինգերորդ, հայոց սակէ դարու գրականական հասանքից:

Աւելացնենք որ շատերն էլ այն միտքն են յայտնում, թէ Ազաթագրոսի խօսքերն անհաւատարի են թըվում մեր ձեռքը չէ հասած և թէ մեր այսօրուայ ունեցած յիշեալ հեղինակի պատմութիւնը մի խմբագրութիւն է յետազայ մասնակի: Ոմանք ասում են, թէ միայն (?) Չինոս Գլակը իր սպատմութիւն Տարնոյց գրելու ժամանակ ձեռքին ունեցել է հին, վաւերական բնաղբը \*), որ այժմ մեզ համար կրած է:

Ինչ և իցէ Ազաթագրոսի պատմութեան վրեժը, ինչպէս որ հասել է մեզ, որքան կուզէ ձեռք տուած լինի, այնու ամենայնիւ չէ կարելի տեսլ, որ դրա ընդհանուր տպը չորրորդ դարուայ չը լինէր և եթէ կղան գրել մի քանի տեղերում թիթի փոփոխութիւններ՝ գրեալ էին կարող կորցնել գրքի ամբողջութիւնը, որ բաղկանում է երեք մասից— Առաջինի մէջ իր ժամանակի քաղաքական պատմութիւնը անհույս յետոյ պատմում է մեր Գրիգոր Լուսաւորչի անցքերը և մարտիրոսական չարարանքները, որոնց եթէ կրօնական աչքով չը նայենք՝ անկարելի ու միանգամայն անհաւատարի

\*) Victor Langlois. Coll. des Historiens anc. et mod. de l'Armenie, I, 1867 Paris.

թանոսական գրականութեան և հետեւապէս հայոց թէ հին և թէ նոր (հինգերորդ դարուայ) տառերի վրա՝ բազա ունեցալ մի երկու խօսք աւել հնագիտական կողմից, թէ ինչ ընդում և թէ ինչ տառերով գրած էր դա: Սորա վրա աւելորդ է նորից բան տակ և կրկնել: Գանձ չորրորդ դարու այդ հեղինակի գրքին՝ պատմութեանը:

Շատերը մտանալով Մար-Աբասի գրած և Մովսէս խորենացու ձեռքով կրճատած ու մեղ աւանդած պատմութիւնը՝ Ազաթագրոսին, որ ինչպէս յայտնի է քրիստոնէութեան չորրորդ դարունն էր ապրում, անուանում են առաջին պատմագիր հայոց ազգի: Գուցէ այն պատճառով, որ դրանից առաջ մենք չունենք մի օրինաւոր, հեղինակութիւն ունեցող հայ պատմիչ: Եւ թէ խորենացին, և թէ մեզ հաղորդում է մեր ազգային հին պատմութիւնը քաղած Մար-Աբասից՝ այդ էլ նա անում է հինգերորդ դարում:

Ինչ և իցէ Ազաթագրոսը, որ այն քրիստոնէական Հայաստանի առաջին պատմական յիշատակարանը կարող է համարվել, թէ հայերի և թէ ուրիշ կրօնական ազգերի մօտ համբաւ ունէր և այժմս էլ հեղինակութիւն է ստանում իր շարադրած պատմութեամբ: Սորան վկայ են թէ իր ժամանակակից մեր մատենագրները ինչպէս՝ Փաւստոս Բիւզանդ, Չինոս Գլակ և այլն և թէ հինգերորդ դարու հեղինակները: Կարճ Մ. խորենացին՝ մեր ազգի պատմութեան գլխաւոր ու պատուական աղբիւրը՝ շատ անգամ յարգանքով վկայ է բերում դրան ասելով թէ այս անցքերը մանրաւասար պատմում է և Ազաթագրոսը ճշգրտութեամբ անող քարտուղարը: Գաղար Փարպեցին էլ իր կողմից ոչ թէ ուշադրութիւն չէ դարձնում դրա վրա, այլ ընդհակառակը, գովելով խօսում է և անուշաբանա՞ մականունը տալիս, իսկ

Ազաթագրոսի պատմութիւնը կոչում է «սկիզբն առաջին զոյց պատմութեան հայոց»: Հարկաւոր չէ մինչև անգամ յիշատակել յետապայ դարերի պատմագիր-հեղինակներին, որոնք պատիւ են հասարակ Ազաթագրոսի անունը սալ:

Թէպէս այսքան վկայութիւնները մէջ բերելուց յետոյ անկարելի է կասկածանք յայտնել Ազաթագրոսի պատմութեան վաւերականութեան վրա, բայց մի բան կայ, որ առանց յիշատակութեան չը պէտք է անցնել:

Հինգերորդ դարում՝ երբ հայերը իրանց համար կազմել էին մի ուժեղ, սեպական գրականական շխույժ պ. Գրիգորիէի կարծիքով, հին գրականները քննադատական պիտի ենթարկուէին: Եւ նայելով դրանք նիւթին՝ այնպիսի փոփոխութիւն էլ պիտի կրէր գրքը, թէ և այն պահելով իր ընդհանուր տիպը:

Այսպէս էլ Ազաթագրոսը, որպէս չորրորդ դարում ապրող մարդ, երբ քրիստոնէութիւնը հաստատ արմատներ դեռ չէր բռնել Հայաստանում՝ հասարակ պատմագրի գրող պիտի բաւականանար և չէր կարող առաջ բերել իր գրքում այն վարդապետական (դոկտրինական) մտքերը, որ ինչպէս յայտնի է, չորրորդ դարում չէին ծաղկում, այլ յետագայ՝ հինգերորդ դարուայ ոգու ծնունդ պէտք է ընդունել: Եւ շատ տեղ մեր չորրորդ դարուայ պատմագիրը սուրբ գրքից քաղաւորներ անելով՝ կարելի է ասել համաձայնում է հինգերորդ դարում թարգմանիչներին ձեռքով կազմած կտակարանի հետ, որ իրաւ մի գեղեցիկ ու մաքուր թարգմանութիւն լինելով՝ նշանակաւ հեղինակութիւն ունէր և ունի: Բայց նորանից աւելորդ չէր լինել յիշել և մի քանի «հրովարտակներ» անվաւերական լինելը որ պրօֆէսորի կարծիքով չորրորդ դարու սովորական հրովարտակներն նման չեն:

